Սամվել Կարապետյան

ՋԱՎԱԽՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Самвел Карапетян

ХАЧКАРЫ ДЖАВАХКА

Samvel Karapetian

KHACHKARS OF JAVAKHK

ԵՐԵՎԱՆ 1995

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՁԱՎԱԽՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 1995

85,134(22)

Խմբագիր՝
Լաուրա Մանուկյան
Կազմի ձեւավորող՝
Արմեն Գեւորգյան

Գիրքը հասցեագրվում է ինչպես խաչքարային արվեստով ու դրանց պատմությամբ զբաղվող մասնագետներին, այնպես էլ հայ մշակույթով հետաքրքրվող ընթերցողներին:

Հեղինակից

Ջավախքում խաչքարերի որոնման նպատակով բազմաթիվ հնավայրեր այցելել ենք շնորհիվ սրտացավ շատ ու շատ տեղացիների աջակցության:

Առիթից օգտվելով խորին շնորհակալություն եմ հայտնում գանձացի Գրիգոր Քանանյանին (ուսուցիչ), սաթխացի Արտուշ Մանուսյանին (պատմաբան, դպրոցի ուսմասվար), սիրկվացի Խաչատուր Հարությունյանին, մաջաղեցի Երվանդ Շիրինյանին (դպրոցի տնօրեն), մեծ գոնդուրեցի Ռազմիկ Միքայելյանին (ուսուցիչ), մերենեցի Կամո Քաղքցյանին, բեժանոցի Վարազդատ Խուդավերդյանին, դուլալիսցի Արտակ Արաբյանին (դպրոցի տնօրեն), գոմանցի Վելիխան Վարդանյանին, խանդոցի Ջոն Թորոսյանին, օրջացի Մեխակ Անտոնյանին, բոզալեցի Կարո պապին (Կարապետ Մեյրոյան), կարգախցի Մարտին Թազվորյանին, դաղեշցի Արտաշ Մարգսյանին (վարորդ), խավեթցի Մելսիկ Թորոսյանին (խորհրդ տնօրեն), տաբածղուրեցի Գրիգոր Ամրշատյանին (դպրոցի տնօրեն), տուրցխեցի Գուրի Եթերին (բանաստեղծ), դիլիսկեցի Ռուբեն Նահատակյանին (բանասեր) եւ մանավանդ տուրցխեցի Հակոբ Ավետիսյանին, որը շաբաթներ շարունակ իր ժամանակն ու հնարավորությունները զոհելով էապես նպաստեց սույն աշխատանքի կայացմանը:

Դաշտային հետազոտություններին մասնակցել են Արտուշ Խանջյանը, Ռուբեն Նահատակյանը եւ Հայկ Թորոսյանը:

Դաշտային ուսումնասիրական աշխատանքները սկսվել են 1989 թվականին «Հուշարձանների պահպանության գլխավոր վարչության» եւ ավարտվել՝ «Հայկական ճարտարապետություն ուսումնասիրող» (RAA) կազմակերպության նախաձեռնությամբ ու հովանավորությամբ: Ուսումնասիրությունը հրատարակության է պատրաստել RAA կազմակերպությունը:

Ջավախքի խաչքարերը

Քրիստոնեության տարածման ժամանակներից սկսած Հայաստանում կերտվել ու կերտվում են խաչի հավերժությունը խորհրդանշող հուշարձաններ, սկզբում՝ քառակող կոթողների, իսկ այնուհետեւ՝ խաչքարերի տեսքով: Իրենց սկզբնավորման ժամանակներից սկսած խաչքարերը կարծես վեր են ածվել հայի մտածողության ու աշխարհընկալման հայելիների: Հարյուրամյակներ շարունակ խաչքարը մարմնավորել է հայի ստեղծագործ էությունը եւ դրսեւորվել որպես զուտ ազգային երեւույթ: Այն միաժամանակ իր ուրույն տեղն ունի համաշխարհային քաղաքակրթության գանձարանում:

Խաչքարերը կերտվել են պատմական Հայաստանի ողջ տարածքում եւ տարբեր առիթներով ու նշանակությամբ: Դրանք առկա են նաեւ բուն՝ հայրենիքի սահմաններից դուրս: Մի խոսքով այնտեղ, ուր ինչ-որ ժամանակ ապրել է հայը, լինի դա հեռավոր Հնդկաստանում, թե Ղրիմում, Նոր-Զուղայում թե Դաղստանում կամ թե նույնիսկ՝ Սիբիրում:[1]

Առ այսօր հասկանալի պատճառներով պատմական Հայաստանի մեծագույն հատվածում (էլ չենք խոսում գաղթօջախներում պահպանվածների մասին) խաչքարերը դեռեւս բավարար չափով ուսումնասիրված չեն: Մասնավորապես Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ ներկայիս Թուրքիայի այլ մասերում գտնվող տասնյակ հազարավոր խաչքարերից միայն հատուկենտ նմուշներ են հայտնի գիտական աշխարհին: Այնինչ, դրանք, որ ակամա փաստում են հայի՝ թեկուզ երբեմնի գոյությունը տվյալ վայրում, հաճախ ենթարկվում են միտումնավոր

---

1. Սիբիրյան Իրկուտսկ քաղաքում մի խաչքարի պատվանդանին փորագրված արձանագրությունից պարզվում է, որ այն ՌՃԾԸ (1709) թվականից է («Նոր-Դար» օրաթերթ, 1895, թիվ 107, էջ 3):

ու հետեւողական ոչնչացման: Խաչքարային արվեստի նմուշները անխնա ոչնչացվել ու ոչնչացվում են նաեւ Ադրբեջանի հանրապետության տարածքում: Վիճակը փոքր-ինչ բարվոք է Վրաստանում, ուր առ այսօր պահպանված խաչքարերի թիվը (մեր հաշվառմամբ) կազմում է ավելի քան 1150 միավոր: Դրանց ճնշող մեծամասնությունը գտնվում է պատմական Գուգարք նահանգի Ծորոփոր, Բողնոփոր, Մանգլեացփոր, Քվեշափոր, Կանգարք, Թռեղք եւ Ջավախք գավառների տարածքում, որոնք համապատասխանում են ներկայիս վարչական՝ Մառնեուլի, Բոլնիսի, Թեթրի-Ծղարոյի, Ծալկայի, Դմանիսի, Նինոծմինդայի (Բոգդանովկա) եւ Ախալքալաքի շրջաններին: Քիչ չեն խաչքարերը նաեւ Վրաստանում հայերի հնագույն գաղթավայրեր՝ Քարթլի եւ Կախեթ պատմական մարզերում:

Հարկ է նշել, որ Վրաստանում պահպանված խաչքարերը եւս, որոնց ինչպես՝ գեղարվեստական, այնպես էլ պատմական արժանիքները անժխտելի են, տարօրինակ կերպով, նույնպես համարյա ամբողջովին դուրս են մնացել մասնագետ հետազոտողների տեսադաշտից: Եւ օրինակ Ջավախքում պահպանված խաչքարերից եւ ոչ մեկը առ այսօր բազմիցս հրատարակված զանազան աշխատություններում (խաչքարերին նվիրված) տեղ չի գտել (մշակութային ժառանգության այս բնագավառը աչքաթող են արել նաեւ վրաց մասնագետները, որը սակայն ինքնին հասկանալի է):[2]

Այնինչ, Ջավախքում խաչքարերը սփռված են հինավուրց գավառի ողջ տարածքով մեկ: Դրանք պահպանվել են գլխավորապես հին գերեզմանոցներում, բայց քիչ չեն նաեւ եկեղեցիների պատերի մեջ ագուցվածները: Կան նաեւ մենավոր խաչքարեր, սահմանախաչեր: Ժամանակագրական տեսակետից Ջավախքում առկա են գրեթե բոլոր դարաշրջաններին վերաբերող խաչքարերի նմուշները: Հաջորդելով քառակող կոթողներին, որպիսիք Ջավախքում եւս սակավաթիվ չեն, խաչքարերը կերտվել են առնվազն 9-րդ դարից սկսած եւ, անցնելով իրենց զար-

---

2. Բացառություն է կազմում 1992 թ. հրապարակած մեր մի հոդվածը (Ջավախքի խաչքարերը, «Ազատամարտ», թիվ 44):

գացման հայտնի բոլոր փուլերը, կերտվում են նաեւ մեր օրերում: Պահպանված խաչքարերից հատկապես մեծաքիվ են 9–11, 13–14 եւ 15–17-րդ դարերին վերաբերողները: Բարեբախտաբար դրանց մի զգալի մասը արձանագիր է, իսկ որոշ մասն էլ՝ թվակիր: Գեղարվեստական հարդարանքի տեսակետից Ջավախքի խաչքարերը մեծ մասամբ ունեն պարզ լուծումներ եւ որոշակի ուշագրավ ընդհանրություններ Հայաստանի մի շարք այլ բարձր լեռնային շրջանների հնավայրերում պահպանված խաչքարերի հետ:

Առավել հաճախակի հանդիպող խորհրդանշական զարդաքանդակներից են խաղողի ողկույզները (մի պտուղ, որը գոնե այժմ խիստ կլիմայի պատճառով Ջավախքում ընդհանրապես չի մշակվում), վեցաթեւ աստղը եւ այլն: Ջավախքյան խաչքարերում պատկերաքանդակներ հազվադեպ են հանդիպում, որոնք ի դեպ այնքան հատուկ են ու տարածված, օրինակ՝ Արցախում: Նմանապես հազվադեպ են նաեւ հյուսածո զարդանախշերն ու գոտիները: Ինչ վերաբերում է դրանց պատմական նշանակությանը, ապա այն թերեւս շատ ավելի կարեւոր է, քանի որ բոլոր այդ խաչքարերը հայ մշակույթի միջնադարյան շրջանի հուշարձաններ են եւ իրենց գոյությամբ ապացուցում են Ջավախք գավառի բազմաթիվ բնակավայրերի հայաբնակ լինելը՝ մինչ 19-րդ դարի սկզբներին Կարինի (Էրզրում) հայերի գաղթը:

Մեր օրերում եւս Ջավախքում խաչքարեր են կերտվում, որոնց ոչ սակավ նմուշները կան Ախալքալաքի ու մի շարք գյուղերի գերեզմանոցներում: Վերջիններիս թվում կան իրական արվեստի գործեր, ուր առկա է ոչ թե սոսկ հնի կրկնության պարզ ձգտումը, այլ ավանդական հիմքի վրա շաղախված ստեղծագործական նոր մտահղացումները:

Սույն աշխատանքով առաջին անգամ ներկայացվում են մեր կողմից Ջավախքի տարածքում հաշվառված եւ ուսումնասիրության նյութ դարձած ավելի քան 100 խաչքարեր: Ստորեւ դրանք ներկայացնում ենք ըստ ժամանակագրական հիմքի:

IX-X դարեր

Խաչքարերի վաղագույն շրջանի նմուշներն ընդհանրապես, եւ Ջավախքում նույնպես, մեծաթիվ չեն: Այնուամենայնիվ երկրամասի մի քանի բնակավայրերում դեռեւս պահպանվել են անարձանագիր առանձին խաչքարեր, որոնք ըստ գեղարվեստական ու ոճական առանձնահատկությունների, ինչպես նաեւ համանման այլ կոթողների հետ դրանց համեմատական ուսումնասիրության՝ կարելի է թվագրել մինչեւ 10-րդ դարով: Մասնավորապես՝ **Ախալքալաք** քաղաքի Սբ. Խաչ եկեղեցու արեւելյան ճակատում ագուցված խաչքարը (76x60 սմ) հար եւ նման է 9-10-րդ դարերում կերտված այլ բազմաթիվ խաչքարերին:[3]

Նույն եկեղեցու ներսում, իբրեւ սալահատակ (խորանի մեջ) ագուցված են նշված ժամանակաշրջանին բնորոշ եւս 3 խաչքարեր եւ բեկորներ: **Տուրքիս** գյուղի եկեղեցու ներսում եւ հին գերեզմանատանը պահպանվել են մեկական հնաոճ խաչքարեր եւս, որոնք թվում են ավելի հին, քան՝ 9-րդ դարը, իսկ **Փոկա** եւ **Բուռնաւեթ** գյուղերի թեւավոր խաչքարերը ըստ ամենայնի հնագույն վիշապաքարեր են (կապված ջրի պաշտամունքի հետ), որ հավանաբար վաղ միջնադարում փոքր-ինչ մշակվելով վեր են ածվել խաչքարերի: Դրանցից առաջինը Փարվանա լճի ափին մի բլրի վրա է, իսկ երկրորդը հորդաբուխ աղբյուրի գլխին (երկուսն էլ կանգուն վիճակում են: Մինչեւ 10-րդ դարի ոճական առանձնահատկություններ ունեն **Վաչիան** գյուղի հին գերեզմանատանը պահպանված զույգ խաչքարերը, **Սուլդա** (190x130x50 սմ) եւ Խանդո գյուղերի (բարձրությունն առանց պատվանդանի 283 սմ) թեւավոր խաչերը: Նույն դարաշրջանի գործեր են **Վարեւանում**, Պետրոս Մանասյանի տնամերձ հողամասում եւ **Բավրա** գյուղի հին գերեզմանատանը պահպանված խաչքարերն ու դրանց պատվանդանները: Ըստ ամենայնի նույն դարաշրջանի գործ է նաեւ Խավեթ գյուղի մոտ պահպանված խաչազարդ կոթողը:

---

3. Ա. Շահինյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, Երեւան, 1984, էջ 12-20: Ս. Կարապետյան, Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Էջմիածին» ամսագիր, 1987, Ե-Զ, էջ 80-81:

XI-XIII դարեր

Զրեակ (Կիրովական) գյուղի եւ նրա արեւելյան կողմում գտնվող Զատկի լճի միջեւ տարածված միջնադարյան բնակատեղիի տարածքում պահպանվել են մի քանի խաչքարերի պատվանդաններ, բայց խաչքարերը կորած են: Միայն մեկը, որի վրա հետագայում փոքրիկ մատռանման շենք են կառուցել, դեռեւս կանգուն է իր նախնական տեղում (120x65x32 սմ): Վերջինիս ստորին աջ եզրին վեց կարճ տողերով փորագրված է. Ի՝ Թ(Վ)ԱԿ... ՇԻԱ (1072):

Սա Զավախքի տարածքից մեզ հայտնի թվակիր ամենահին խաչքարն է:

Ախալքալաքի Սբ. Խաչ եկեղեցու հարավային ճակատում (արտաքուստ) ագուցված է մի խաչքարի բեկոր (65x34 սմ) քառատող կիսաեղծ արձանագրությամբ՝ ՉԼԸ թվականից (1289): 12–13-րդ դարերի գրչությամբ ու խաչաքանդակներով մի բեկոր էլ ագուցված է նույն եկեղեցու ներսում (59x46 սմ): Ի դեպ, այդ եկեղեցու պատերի մեջ ագուցված խաչքարերը այդտեղ են փոխադրվել հին Ախալքալաք քաղաքատեղիից, որտեղ որ անընդհատ հայտնաբերվում են արձանագիր տապանաքարեր ու խաչքարեր:

1990-ին նշված քաղաքատեղիում հայտնաբերվեց մի խաչքարի պատվանդան (100x72x55 սմ), որի արեւմտահայաց երեսին կա 7 տողանոց ընդարձակ եւ թվակիր (Չ=1251 թ.), բայց կիսաեղծ արձանագրություն:

XIV դար

1988-ին նույն հնավայրից հերթական անգամ հայտնաբերված գեղաքանդակ խաչքարը (կից տապանաքարը ՉԾ=1301 թվականից է) տեղափոխվեց տեղի պատմական թանգարանի բակը[4], իսկ այնուհետեւ կանգնեցվեց Սբ. Խաչ եկեղեցու հարե-

ւանությամբ (չափերն են՝ 195x79x25 սմ): Այս խաչքարը բավական բարձր արժանիքներ ունի գեղարվեստական լուծումների շնորհիվ: Վերջինիս շատ չեն զիջում նաեւ **Ղուլալիս** գյուղի գերեզմանոցում պահպանված խաչքարերը: Դրանցից մեկը, որ մեջքի վրա ընկած է գետնին ու փոքր-ինչ թաղված հողի մեջ (115x73 սմ) վերնամասում կրում է հետեւյալ հնգատող արձանագրությունը. Ի ԹՎ(ԻՆ) ՉԿԳ (1314): ԵՍ ՇԱՀՍ Կ/ԱՆԳԵՑԻ ԽԱՉՍ ՅԻ/ՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆ/ՈՂԱՑ ԻՄՈՑ ՏՐ ԱԾ/ՈՂՈՐՄԻ ՆՈՑԱՅ:[5]

Նախորդից ոչ հեռու, իր սկզբնական տեղում, պատվանդանով հանդերձ կանգուն է մի գեղաքանդակ, բայց անարձանագիր խաչքար եւս (120x73x23 սմ): Միայն պատվանդանի (բարձրությունը 1 մետր) ճակատին նկատվում է թերի թողնված արձանագրություն: Ըստ գեղարվեստական առանձնահատկությունների՝ ժամանակագրական առումով մոտ է նախորդին: Նույն գերեզմանատանը պահպանվում է նաեւ եռատող, բայց անթվակիր արձանագրությամբ խաչքարի պատվանդան. ԵՍ ՍՈՂՈՄՈՆ ՍՈՒՏԱՆՈՒՆ Ք(Ա)Հ(ԱՆԱ)/ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽ(Ա)ՉՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ Ծ/(Ն)ՈՂԱՑ ԻՄՈՑ, ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԻ ՆՈՑԱՅ:

14-րդ դարով թվագրվող խաչքարեր ու ժայռախաչեր են պահպանվել նաեւ **Գյումբուրդա** գյուղում:

XV դար

15-րդ դարին վերաբերող պահպանված խաչքարերի պահպանված նմուշները Ջավախքում համեմատաբար ավելի մեծաթիվ են, իսկ աշխարհագրությունն էլ ավելի լայն: Միայն **Օրջա** գյուղում պահպանվել են շուրջ 12 խաչքարեր՝ ամբողջական

---

4. Յ. Սարիբեկյան, Հուշարձաններին հոգատար վերաբերմունք, «Փարոս» օրաթերթ, 1988, 30 հունիսի, թիվ 78:

*5. Հնավայրի մասին տես՝ «Ազատամարտ» շաբաթաթերթ, 1993, թիվ 27, 16–22 հուլիս, էջ 15 (մեր եւ **Ռ. Նահատակյանի** հեղինակությամբ):*

կամ բեկորված: Դրանցից 7-ը կրում են արձանագրություններ, ըստ որում 3-ը թվակիր են:

1. ԵՍ Ա(ՍՏՈՒԱ)Ծ(Ա)ՅՏՈՒՐՍ ԿԱ(Ն)ԿՆԵՑԻ ԶԽ/ԱՉՍ/ Յ(Ի)Շ(Ա)/Տ(Ա)Կ/ ՀԱՒՐ ԻՄ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ, Թ(Վ)(ԻՆ) ՉԺԲ (1463):

Խաչքարի չափերն են՝ 93x60x29 սմ:

2. Թ(Վ)(ԻՆ) ՉԺԳ (1464) ԵՍ Մ... [Հ] ՕՐ՝ ԽՈՆԴԲԱՐԻՆ:

Խաչքարի (պահպանվում է միայն ստորին կեսը) չափերն են՝ 54x77x15 սմ:

3. Թ(Վ)(ԻՆ) Ջ... ԵՍ ԱՂՈՒՆ/Ս ԿԱՆԿՆ/ԵՑԻ Զ/ԽԱՉՍ/ Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ ԻՆ/Ջ ԵՒ ԻՄ ՏՂՈՅՆ:

Խաչքարի չափերն են՝ 120x60x30 սմ:

4. ...[ԽԱ]ՉՍ Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ ՀՕՐ ԻՄ ԽՈՃԱՅ.....ԻՆ:

Բեկոր է (53x51 սմ), ագուցված մատուռի պատի մեջ:

5. ...ԴՈԼՎԱԹԻՆ: Թ...

Բեկոր է (30x29x15 սմ):

Մնացած խաչքարերն ու բեկորներն էլ անկասկած 15-րդ դարի կեսերի գործեր են, քանի որ գրեթե նույնությամբ կրկնում են բոլոր զարդաձեւերն ու գրչարվեստը:

Նույն ժամանակաշրջանին վերաբերող երկու խաչքարեր էլ պահպանվել են **Տուրքխ** գյուղում, ագուցված Սբ. Աստվածամոր եկեղեցու արեւմտյան ճակատում: Դրանք երկուսն էլ արձանագիր են եւ ամենայն հավանականությամբ միեւնույն վարպետի ստեղծագործություն: Խաչքարերից մեկը (96x56 սմ) կրում է հետեւյալ արձանագիրը. Թ(Վ)(ԻՆ) ՉԺԳ (1464), ԱՄԻՐՍ ԿԱՆԿՆ[ԵՑԻ ԽԱՉ]Ս Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ ՀՕՐ ԻՄ Կ...:

Երկրորդին (92x55 սմ) փորագրված է. Թ(Վ)(ԻՆ) ՉԺԴ(1465) ԵՍ Մ(Ա)ՐՏ(ԻՐ)ՈՍ ԿԱ(Ն)ԿՆ(Ե)ՑԻ ԶԽ[ԱՉՍ].....

Անթվակիր, բայց արձանագիր խաչքարեր են պահպանվել նաեւ **Չամդուրա**, **Մուրճախեթ**, **Կուլիկամ**, **Կոկիա** գյուղերում եւ **Ախալքալաք** քաղաքում: Դրանք բոլորն էլ անվրեպ 15-րդ դարի գործեր են, քանի որ թե՝ վիմագրերի գրչությամբ եւ թե քանդակների ու զարդերի ոճական եւ գեղարվեստական առանձնահատկություններով, ինչպես նաեւ կատարման կերպով հար եւ նման

են նախորդներին:

Չամդուրայում պահպանվել են 3 խաչքարեր: Երկուսը արձանագիր, բայց բեկորված, իսկ մեկը՝ ամբողջական, բայց անարձանագիր: Վերջինիս ստորին մասում պատկերված է մի հեծյալ (112x73x20 սմ): Երեքն էլ գտնվում են գյուղամիջում, հին գերեզմանատանը: Արձանագրվածների բովանդակությունը հետեւյալն է. [Ե]Ս ՅՈՎԱՆԷՍ ԵՐԷՑՍ, ԳՐԻԳՈՐՍ, ԿԱՆԿ(Ն)ԵՑԱՔ ԶԽԱՉՍ ՅԻՇԱՏ(ԱԿ) ԵՒԱՆ, ԹԱՄԱՐԻՆ... (չափերն են՝ 90x75x18 սմ):

Մյուսի վրա. ... ԻՄ ԵՂԲ(ԱՅՐ)Ս ՅՈՎ(Ա)ՆԷՍ ԵՒ ԽԱՉԱՏ(ՈՒ)ՐՍ ԿԱՆԿՆ(Ե)Ց(Ա)Ք ԶԽԱՉՍ Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ ՀԱՒՐ ՄԵՐ Ս... (չափերն են՝ 65x57x16 սմ):

Մուռճախեթի հարավային ծայրում պահպանված մենավոր խաչքարն էլ (85x70x30 սմ) կրում է հետեւյալ արձանագիրը. ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ ՇԱՀՈՒԼՄԱՆԻՆ, ՎԱՐՁԷԼԻՆ՝ ԿԱԶՄՈՂՆ ԱՅՍ ԵՒ ԻՒՐ (Կ)ՈՂԱԿ(ՑԻՆ)...:

Կուլիկամի Սբ. Երրորդություն եկեղեցու արեւելյան ճակատում, արտաքուստ, գլխիվայր դիրքով ագուցված խաչքարի (100x75 սմ) եզրագոտիներով ձգվում է հետեւյալ արձանագրությունը. ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ[ՀԱ] ՅՐՆ՝ ՄՈՒՐԱԴԲ... ԾՆՈՂԻՆ...:

Կոկիա գյուղի հյուսիս-արեւմտյան եզրին տարածված հայոց պատմական գերեզմանատանը պահպանվել են մի քանի խաչքարեր, բայց ավելի շատ դրանց պատվանդանները: Միայն մեկի վրա (125x90x22 սմ) ընթերցվեց հետեւյալ անթվակիր արձանագրությունը. Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է Խ(Ա)Չ ՄԻՐՁԻՆ:

Ախալքալաքի Սբ. Խաչ եկեղեցու հյուսիսային պատի տակ (հին քաղաքատեղիից փոխադրված) պահպանվում է ամբողջական, բայց քիվամասում եղծված միատող արձանագրությամբ եւս մեկ խաչքար (98x62x18 սմ), բնորոշ 15-րդ դարին:

Նույն դարաշրջանին վերաբերող, բայց անարձանագիր խաչքարեր են պահպանվել **Բուռնատեթ**, **Քարսեղ** եւ **Մամզարա** գյուղերում: Վերջինումս պահպանված խաչքարերի պատվանդանները վկայում են, որ միջնադարում այստեղ բազմաթիվ խաչքարեր են եղել:

XVI դար

1502 թ. մի հսկա խաչքար դեռեւս իր սկզբնական տեղում, բայց փոքր-ինչ թեքված դիրքով պահպանվում է **Կարտիկամ** գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցուց հազիվ 60 մ դեպի հյուսիս-արեւելք, Կոլյա Դումանյանի տնամերձ հողամասում: Խաչքարի (200x120x24 սմ) վերնամասում փորագրված է. ԵՍ ԽԻՄՇԻ ԱՂԵՍ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ՁԱՀԱՆՇԻՆ, ԴՈՒՄԱՅԽԱԹԻՆ, ՈՍԿԻ ՏԱՏԻՆ, ՄՈՒՐԱՅԴԻՆ, ՄԻՐԱՔԻՆ, ԹԱՅԻԲԻՆ, ԲՈՒԴԱԽԻՆ, ԵՁԴԱՏ ԱՂԽԻՆ, ՁԱՄԲԱՇԽԻՆ, ՍԻՄԵՈՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՁԾԱ(1502):

1956 թ. կատարած հնագային աշխատանքների ժամանակ **Դավնյա** գյուղացի Գեւորգ Գեւորգյանը (այս գյուղը մինչեւ 1944 թ. թուրքաբնակ էր) հայտնաբերեց մի ամբողջական խաչքար (142x70x13 սմ), որի պահպանությունն իրականացրեց իր տան պատի տակ կանգնեցնելով: Այժմ տան տերն է որդին՝ Խաչատուր Գեւորգյանը: Խաչքարի վերնամասում հնգատող փորագրված է. ԵՍ ՂԱՆՓԱՌ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՍԱՐՈՒՂԱԳԱՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՁԾԴ(1505):

6–7 խաչքարեր եւ բազմաթիվ պատվանդաններ են պահպանվել **Դիլիսկա** գյուղում, հին գերեզմանատանը, Սբ. Սարգիս եկեղեցում եւ նրա շուրջ: Դրանցից 4 ամբողջական խաչքարեր են ագուցված՝ հիշյալ եկեղեցու ներսում, ըստ որում՝ բոլորն էլ ունեն հողմնահար արձանագրություններ, որոնցից մեկը. ԹՎ(ԻՆ) ՁԿԵ(1516), ՅԻՇԱՅՏԱԿ Է ԽԱՉՍ...:

Բոլոր խաչքարերն էլ միառձ են՝ թե գեղարվեստական-կատարման եւ թե հորինվածքային ու գրչության առումներով:

Կարզախ գյուղից արեւմուտք, Խոզաբույն (Խոզապին) լճի հյուսիսային ափից ոչ հեռու պահպանվում են հին գյուղատեղիի գերեզմանատան ավերակները: Հնավայրում, որ հայտնի է «Ավետենց սուրբ» անունով, կիսով չափ հողի մեջ խրված դրությամբ պահպանվում են 4–5 խաչքարեր, կիսաեղծ արձանագրություններով: Դրանք բոլորն էլ վերաբերում են 16-րդ դարի 1-ին կեսին:

Ի դեպ, այս հնավայրից մոտ 1 կմ արեւմուտք, գրեթե կից Թուրքիա-Վրաստան պետական սահմանին, պահպանվում են եւս մի հին գյուղատեղիի ավերակները՝ գերեզմանոցով հանդերձ: Այս հնավայրը տեսնել ցավոք մեզ չի հաջողվել, ուստի բավարարվում ենք ավելի քան հարյուր տարի առաջ «Մեղու Հայաստանի» լրագրի թղթակից՝ Բզնունու հաղորդած տվյալները վերահրատարակելով. «Ծղարիսքաւի եւ Կարզախի մէջտեղում կայ մի աւերակ գիւղ Սամախօր անունով, որը արքունական կալուածք է եւ գտնվում է կարզախցիների շահեցողութեան տակ: Այդ՝ բոլորովին գետնի հետ հաւասարած աւերակի քարերի մէջ ես տեսայ 6 խաչքարեր եւ գերեզմանաքարեր հայերէն արձանագրութիւններով, որոնք դժբախտաբար անկարելի եղաւ կարդալ...»:[6]

XVII-XVIII դարեր

Ուշ միջնադարյան խաչքարերի նմուշները Ջավախքում եւս առկա են, բայց նկատելի սակավությամբ: Ուշագրավ է հատկապես **Ալաստան** գյուղից 1 կմ հյուսիս-արեւմուտք, հին գյուղատեղիի կիսավեր եկեղեցու արեւմտյան կողմում կանգնած խաչքարը (90x90x12 սմ), կերտված 1643 թ.: Սրա վրա դժվարությամբ ընթերցվում է (արդեն հողմնահար է). ՅԻՇԱՏԱԿ ԽԱՉՍ ՊԱՐՈՒՆ...., ԹՎ(ԻՆ) ՉՃՂԲ(1643):

1676 թ. մի արձանագիր խաչքար էլ պահպանվել է Խավեթ գյուղից 3 կմ հարավ-արեւմուտք **«Մրակովալ»** գյուղատեղիի Սբ. Սարգիս եկեղեցու շուրջ տարածված գերեզմանատանը (100x72x45 սմ): Սա ունի «Ամենափրկիչ» խաչքարերին բնորոշ հորինվածք, քանի որ պատկերում է խաչելության տեսարանը: Խառը փորագրությամբ արձանագրությունը հետեւյալն է. Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԾԱՄԻՆ, ՈՍԿԵՐԻՉԻՆ, ՎԱՐԾԵԼԻՆ, ՌՃԻԵ (1676): Նույն գերեզմանոցում, նույնպիսի հորինվածքով

---

6. «Մեղու Հայաստանի» օրաթերթ, 1881, թիվ 191, էջ 3:

մի խաչքար էլ կա, նախորդի նման կիսով չափ թաղված հողի մեջ, բայց անարձանագիր:

1741 թվականի մի մարմարակերտ խաչքար է ագուցված **Արակովա** գյուղի Սբ. Գեւորգ եկեղեցու արեւմտյան ճակատում: Սրա ստորին մասում հնգատող փորագրված է: ՍԲ. ԽՈՉՍ ԲԱՐԵԽՕՍ Է ԱՌ Ա(ՍՏՈՒԱ)Ծ Վ(Ա)Մ(Ն) ԳՐԻԳՈՐԻՆ ԾՆՕՂԱՑ՝ ՂԱԶԱՐԻՆ, ՍԱՌԱԻՆ, ԵՒ ՅԱՆԳՈՒՑԵԱԼ՝ ՀԱՆԲԱՐԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃՂ (1741):

XIX-XX դարեր

Ինչպես տեսանք 19-րդ դարում կառուցված կամ վերանորոգված եկեղեցիների որմերում հաճախ ագուցվել են հին խաչքարեր, իբրեւ սուրբ մասունք: Այնտեղ, ուր այդ չի գտնվել կամ չեն ցանկացել տեղահանել գերեզմանատանը գտնվածները, կերտել են նորերը ու այդպես ագուցել եկեղեցիների առավել տեսանելի ու ընդգծված մասերում: Այդպես է օրինակ Մեծ Գյոնդուրայում 1869 թ. նորոգված Սբ. Հակոբ եկեղեցու արեւմտյան ճակատում ագուցված կարմիր տուֆից կերտված գեղաքանդակ խաչքարը: Նույնպիսի լուծումներ ունեն Խոջաբեկի, Գանձայի, Ալաթումանի, Ականայի եկեղեցիները: 19-րդ ու հատկապես 20-րդ դարերում խաչքարերը կերտվել ու առ այսօր առավելապես կերտվում են իբրեւ գերեզմանական հուշարձաններ:

Այդպիսիք Ջավախքում հանդիպում են գրեթե բոլոր բնակավայրերի այժմեական գերեզմանոցներում: Դա, ինչ խոսք, ինքնին դրական մի երեւույթ է, քանի որ այդպես պահպանվում եւ զարգացվում է հարուստ ավանդույթներ ունեցող հայ մշակույթի մի կարեւոր բնագավառը՝ խաչքարային արվեստը:

Хачкары Джавахка

резюме

С начала распространения христианства в Армении были созданы памятники символизирующие и прославляющие новую веру, с 4-7-ой век в виде четырехгранных стелл, а после 8-9-го веков и в виде хачкаров. Последние, которые создаются и до сих пор, представляют важнейшую и неотъемлемую часть наследия богатого искусства Армении.

Хачкары создавались везде, как на всей территории исторической Армении, так и в ближних и дальних колониях. По неоконченным регистрационным данным их численность доходит до нескольких десятков тысяч (только на территории РА зарегистрировано более 50.000 хачкаров). К сожалению отметим, что до сих пор есть такие регионы, где сохранившиеся хачкары ещё не изучены. Одним из таких регионов является гавар Джавахк в губернии Гугарк исторической Армении (ныне Ахалкалакский и Ниноцминдский районы РГ), где сохранилось более 100 хачкаров. Что касается времяисчисления, то в Джавахке существуют датированные хачкары (так и без эпиграфики) относящиеся к разным векам. Объемлема также география местонахождения Джавахкских хачкаров. Это более чем 30 исторических мест, которые распространены на всей территории гавара. По меньшей мере, встречающиеся Джавахкские хачкары имеют ценнейшее значение как с художественной, так и с исторической точки зрения. Существование хачкаров в разных местах гавара доказывает тот факт, что в течении нескольких веков множество сёл были населены армянами.

САМВЕЛ КАРАПЕТЯН

Khachkars of Javakhk
Summary

Since the dissemination of Christianity in Armenia monuments symbolizing and glorifying the ideology of new religion have been created and erected, at the beginning in the shape of four-facet stella-stones and then after the 8th-9th centuries in the forms of khachkars (cross-stones). The latters are being created up today and are considered as an important and inseperable part of the Armenian culture.

Khachkars have been created everywhere both on the whole territory of historical Armenia and in Armenian settlements of neighbouring and far-off places.

According to all available final data of the registration of preserved specimens more than 50000 khachkars are already known (only in the territory of the Republic of Armenia).

Unfortunately, still there are regions where the preserved khachkars haven't been studied up today. One of such regions is, e.g., the territory of Javakhck gavar of Gugarck province (which now corresponds Ninotsminda and Akhalckalack districts of the present Republic of Georgia) where the number of preserved khachkars is over 100.

As to the chronology, in Javakhck there are inscribed (sometimes dated) and inscription less khachkars referring to all epochs. The geography of their settlement is vast, as wells more than 30 olden places spread all over the territory of the ancient gavar.

Khachkars dateng back from at least the 9th century and being created up to the present days are of artistic and historical great value.

The existence of khachkars in Javakhck's different places of antiquily is the best proof of many villages being armenian settlements through ages.

SAMVEL KARAPETIAN


ԱՊԻՆՁԱ (ԱՊՆՁԱԿ)
ԱԽԱՔԱՂԱՔ
ՆԻՆՈՒԵՄԻՆԴԱ (ԲՈԳԴԱՆՈՎԿԱ)
Սամսար լեռ 3284
Մեծ Սամսար
Փոքր Սամսար
Մեծ Աբուլ լեռ 3300
Փոքր Աբուլ լեռ 2799
Մեծ Արագյալ
Փոքր Արագյալ
Մեծ Գոնդուրա
Փ Գոնդուրա
Մեծ Խանչալի
Փոքր Խանչալի
Եղեղ լեռ
Արարատ լեռ 3196
Նախիջևան լեռ 3009
Տաքանդուր լեռ
Սաղամո լեռ
Դեբեդ գետ
Արաքս գետ
Գետ լեռ
Ալազանի գետ
Գանձակ
Դարաչիչակ
Դարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղ





Ախալքալաք, խաչքարեր 9-10 դդ.



Տուրքխ գղ., խաչքարեր 9 դ.



Բուռնաշեթ գղ., թեւավոր խաչ, 9 դ.



Փոկա գղ., թեւավոր խաչ մինչեւ 9 դ.

Սուլդա գղ., թեւավոր խաչ 9-10 դդ.



Վաչիան գդ., խաչքարեր
գերեզմանատանը 9-10 դդ.

Վարեւան գղ., խաչքար 9-10 դդ.

Խավեթ գղ., խաչքար 10-11 դդ.





Բավրա գղ., խաչքար եւ ոտվանդան գերեզմանատանը 10 դ.

Զրեսկ գղ., խաչքար 1072 թ.

Սաղամո գղ., խաչաքանդակ
եկեղեցու բարավորին 10-11 դդ.

Խանդո գղ., խաչքարի
պատվանդան 10-11 դդ.



Խանդո գղ., թեւավոր խաչ 10-11 դդ.



Ախալքալաք քաղաքատեղի, խաչքարի պատվանդան 1251 թ.



Ախալքալաք, Սբ. Խաչ եկեղեցու ներսում ագուցված խաչաքանդակներ 13 դ.



Խաչքար 1301 թ. հայտնաբերվել է 1988 թ.
Ախալքալաք քաղաքատեղիից





Ղուլալիս գդ., խաչքար 14 դարի սկիզբ



Ղուլալիս գղ., խաչքար 1314 թ.



Օրջա գղ., խաչքարեր 15 դ.



Օրջա գղ., խաչքարեր 15 դ.









Օրջա գղ., խաչքարեր եւ պատվանդան 15 դ.

Օրջա գղ., խաչքար 1463 թ.

Օրջա գղ., խաչքար 1464 թ.

Տուրքխ գղ., խաչքար 1465 թ.

Տուրքխ գղ., խաչքար 1464 թ.



Մուրճախեթ գդ., խաչքար 15 դ.



Մամզարա գդ., խաչքարի բեկոր 15 դ.

Կուլիկամ գդ., խաչքար 15 դ.



Ախալքալաք, խաչքար եւ
խաչքարի բեկոր Սբ. Խաչ
եկեղեցու տարածքում 15 դ.

Կոկիա գղ., խաչքարեր գերեզմանատանը 15 դ.



Չամդուրա գղ., խաչքար 15 դ.

Չամդուրա գդ., հատված խաչքարից

Կարտիկամ գղ., խաչքար 1502 թ.

Կարտիկամ գդ. հատված խաչքարից



Չամդուրա գղ., խաչքարեր գերեզմանատանը 15 դ.

Դավնիա գդ., խաչքար 1505 թ.

Հատված խաչքարից





Քարսեղ գդ., խաչքար 15 դ.



Բուռնաբեթ գդ., խաչքար 15 դ.



Մակովալ գյուղատեղի, խաչքարեր 1676 թ. եւ 17 դ.



Դիլիսկա գղ., խաչքար 16 դ.

Դիլիսկա գղ., խաչքար 1516 թ.



Դիլիսկա գղ., խաչքար եւ ոտվանդաններ 16 դ.



Դիլիսկա գդ., խաչքար 16 դ. սկիզբ

Մաջադիա գղ., խաչքար 15-16 դդ.

Գյումբուրդա գղ., խաչքար 15-16 դդ.



Կարզախ գդ., ժայռախաչ (16 դ. սկիզբ)
«Ավետենց սուրբ» հնավայրում

Ալասան գդ.,
խաչքար 1643 թ.



Արակովա գղ., խաչքար 1741 թ.



Մերենիա գղ., խաչքար 17-18 դդ.



Մեծ Գոնդուրա գղ., խաչքար ագուցված եկեղեցու արևմտյան ճակատում 19 դ.



Ախալքալաք, թեւավոր խաչ
20 դ. սկիզբ

Ախալքալաք, խաչքար 1979 թ.
Սբ. Խաչ եկեղեցու բակում